

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի շնորհավորական ուղերձը

Վերջին զանգի կապակցությամբ

24.05.2018



Միբելի շրջանավարտներ:

Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքները Վերջին զանգի կապակցությամբ:

Բարի երթ ու կանաչ ճանապարհ եմ մաղթում 2017-2018 ուսումնական տարում Վայոց ձորի մարզի հանրակրթական հաստատություններին հրաժեշտ տվող 263 շրջանավարտներին: Թող նորանոր ձեռքբերումներով ու հաղթանակներով լի լինի բոլոր շրջանավարտների կյանքի ուղին:

Միբելիներս, այսօր տոն է ձեզ համար, քանզի դուք քայլ եք կատարում դեպի կյանքի նոր փուլ, անցյալում թողնելով ձեր վարդագույն մանկության, գունազեղ պատանության տարիների պատմությունը՝ դպրոցական կրթության անվերադարձ հեռացող ժամանակահատվածը: Դա կյանքի մի շրջան էր, ուր դուք գտնվում էիք ձեր սիրասուն ծնողների ու սիբելի ուսուցիչների հոգածության ներքո և ձեր երազանքները թներ էին առնում ընտանիքում ու դպրոցում ձեր շուրջը ձևավորված անկեղծ ու ջերմ մթնոլորտում: Հաստատ է, որ ձեր ընտանիքներից բխող ջերմությունը և սիբելի ուսուցիչների բարեմաղթանքներն ու խորհուրդները կօգնեն ձեզ կյանքի գալիք ճանապարհը նույնպես անցնել արժանապատվորեն: Իսկ դպրոցում ձեռք բերած ամենաարժեքավոր գանձի՝ գիտելիքի շնորհիվ դուք կարող եք հաղթահարել բոլոր դժվարությունները և լուծել հետագայում ձեր ճանապարհին հանդիպած խնդիրները:

Համոզված եմ, որ մեր մարզի գալիք տարիների պատմությունը, տնտեսության զարգացման տեմպերը պայմանավորված է լինելու նաև ձեզանով և, ձեր ընտանիքի, դպրոցի, ծննդավայրի, մեր մարզի և մեր երկրի բարօրության համար կարևոր է լինելու նաև ձեր ներդրումն ու պատասխանատվությունն ստանանձնած գործի հանդեպ, ուր էլ որ լինեք, ինչ էլ որ դառնաք:

Կրկին շնորհավոր ձեր տոնը, սիբելիներս: Մաղթում եմ ձեզ բարի երթ, կյանքի արևոտ ու կանաչ արահետ:

Հաջողություն հետագա ձեր բոլոր ձեռնարկումներին: